ՀՀԴ-ի 11-րդ ընդհանուր ժողովը հատուկ ուշադրություն դարձրեց կուսակցության կազմակերպական խնդիրներին: Առաջին պատճառն այն էր, որ 1929 թ. դրությամբ մի պահ հանդարտվել էր պայքարը գաղթավայրերում, իսկ երկրորդը, որ 1920 թվականից ի վեր ՀՀԴ-ի համար ձևավորված նոր պայմանները պարտադրում էին կատարելագործել «կուսակցական մեքենան»՝ այն հարմարեցնելով արդի ժամանակաշրջանի մարտահրավերներին<sup>6</sup>:

Հայկական գաղթաշխարհի ցրված զանգվածների կազմակերպման առաքելությունը ՀՀԴ-ում վերագրում էին կուսակցություններին. «...հայ ժողովրդի ազգային կազմակերպված կամքը ներկայացնում են կուսակցութիւնները: Մտածել, թէ չէզոք, անկամ անձն զանգւածը ի վիճակի կը լինի գաղութների կազմակերպութեան խոշոր ու կամքի լարում պահանջող գործը իր վրա առնել, նշանակում է բոլորովին սխալ հասկացողութիւն ունենալ թէ գաղութների և թէ չէզոք տարրերի մասին: Չէզոք տարրը, ի հարկէ, մեծ ոյժ է, բայց միայն կազմակերպված կուսակցութիւնների ղեկաւարութեան տակ. առանձին – փոշի է»<sup>7</sup>: Մինևոյն ժամանակ, արձանագրվում էր նաև, որ 1929 թ. դրությամբ գաղթավայրերի կազմակերպման հրամայականը հասունացած խնդիր է, ուստի սպասելն ու դանդաղելը որևէ պատճառաբանությամբ հայ ժողովրդին վնասել է նշանակում<sup>8</sup>:

11-րդ ընդհանուր ժողովը որոշեց նաև կենտրոնանալ երիտասարդ սերնդի կրթության կազմակերպման և հեղափոխական դաստիարակության վրա, որով ապագայի համար կդաստիարակվեն ազգային գործիչներ<sup>9</sup>:

1931 թ. «Դրօշակում» տպագրվեց «Դաշնակցութեան դերը գաղութներու մէջ» հոդվածը, որտեղ ի սկզբանե առաջ էին քաշվել հետևյալ հարցերը. «Ունի՞ ան դեր այս ցիրուցան, անկազմակերպ զանգւածներուն մէջ. ի՞նչ գլխաւոր առաքելութիւն է վիճակւած իրեն նոր պայմաններու, նոր կացութեան բերումով. իրմէ դուրս կա՞ն ուժեր, որոնց վրա հիմնաւորէր իր յոյսը արտասահմանեան հայութիւնը: ...Դաշնակցութեան առջև ... գաղութներու մէջ

<sup>1</sup> *Նույն տեղում:*

<sup>2</sup> *Նույն տեղում:*

<sup>3</sup> *Տէ՛ս նույն տեղում:*

<sup>4</sup> *Տէ՛ս «Յայտագիր Հ. Յ. Դ. ԺԱ. ընդհանուր ժողովի», «Դրօշակ», 1929, թիւ 4-5, էջ 67:*

<sup>5</sup> *Տէ՛ս «Գաղութային խնդիրներ», «Դրօշակ», 1929, թիւ 6-7, էջ 110:*

<sup>6</sup> *Տէ՛ս «Կազմակերպական խնդիրները Հ. Յ. Դ. XI ընդհանուր ժողովում», «Դրօշակ», 1929, թիւ 4-5, էջ 69:*

<sup>7</sup> *«Գաղութային խնդիրներ», «Դրօշակ», 1929, թիւ 6-7, էջ 111:*

<sup>8</sup> *Տէ՛ս նույն տեղում:*

<sup>9</sup> *Տէ՛ս նույն տեղում, էջ 111-113:*

բացած է, իր կամեցողութենէն անկախ և իրականութեան հրամայականէն բխող, աշխատանքի լայն դաշտ մը: ...Եւ տարագիր, երկրէն դուրս նետուած, գաղութներու հայութեան հոտառութեան, բնագոյական ողջամտութեան պետք է վերագրել այն փաստը, որ այսօր կայ կազմակերպւած Դաշնակցութիւն ամենուրեք ուր կայ ափ մը տարագրուած հայութիւն»<sup>1</sup>:

Հասկանալով, որ ՅՅԴ-ի դերի մեջ տեղի են ունեցել զգալի փոփոխություններ, հողվածում ընդգծվում էր, որ կուսակցության հիմնական առաքելությունն արտասահմանում այնտեղի հայությունն առաջնորդելն ու կազմակերպելն է<sup>2</sup>: Անհրաժեշտ էր դիտվում գաղթաշխարհի հայությանը կազմակերպել ու դարձնել սեփական հոգսերով ու պահանջներով ապրող համայնք<sup>3</sup>: Առկա էր նաև այն համոզմունքը, որ ՅՅԴ-ից բացի այլ ուժ՝ կոմունիստները, ՄԴԿ-ն կամ ՌԱԿ-ը, ի գործը չէր այդ գործը կատարել<sup>4</sup>: Նույնիսկ եկեղեցին, կապված հույժ ծանրաբեռնվածության հետ, ի վիճակի չէր իրականացնելու այդ առաքելությունը: Գաղութահայության «առաջնորդութիւնը, առարկայական կացութեան մղումով, կը վիճակի Յ. Յ. Դաշնակցութեան, որ կանգնած է միևնույն ազգային ճակատին գլուխ՝ իր լայն շրջապատով, իր կազմակերպական կուռ ցանցով...»<sup>5</sup>:

### ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Համագաղութային մարմնի գաղափարի ձևավորման սաղմերը գալիս են դեռևս 1920-ական թթ. սկզբներից: ՅՅԴ-ի մշակած առաջարկի էությունն այն էր, որ անհրաժեշտ էր գումարել համագաղութային համագումար և ընտրել համագաղութային ղեկավար մարմին: Ըստ որում՝ ՅՅԴ-ն այդ մարմնի ձևավորման համար առաջարկում էր «ժողովրդական ընտրութեան սկզբունքը»<sup>6</sup>: Համագաղութային համագումարին նախատեսվում էր քննարկման նյութ դարձնել գաղութահայությանը հուզող բոլոր կենսական հարցերը<sup>7</sup>:

1923 թ. ՀՀԿ-ն համապատասխան առաջարկը փոխանցեց ՄԴԿ-ին և ՌԱԿ-ին, որոնք թեև սկզբում դրականորեն էին տրամադրված<sup>8</sup>, սակայն հետո հրաժարվեցին համագումարին մասնակցելուց<sup>9</sup>: «Յուսաբեր» թերթը դա կապում էր այն իրողության հետ, որ համագաղութային համագումարի հրավիրմանը դեմ էր հորհրդային Հայաստանի ղեկավարությունը<sup>10</sup>:

ՄԴԿ-ն, այդ ժամանակ կենտրոնացած սեփական քաղաքական ուղեգծի ճշգրտման և հորհրդային Հայաստանի հետ հարաբերությունների վրա, հրաժարվում էր համագաղութային համագումարին մասնակցությունից, քանի որ այն չէր համապատասխանում հորհրդային Հայաստանի ներքին ու արտաքին քաղաքականությանը<sup>11</sup>:

Առաջարկը քննարկման դրվեց նաև ՌԱԿ-ի՝ արտահերթ ընդհանուր պատգամավորական ժողովին ընդառաջ՝ 1923 թ. հոկտեմբերին գումարված խորհրդակցական ժողովում: Ի տարբերություն ՄԴԿ-ի՝ ՌԱԿ-ի ժողովում զգալի քննարկում ծավալվեց: Մասնավորապես, ժողովականներին հետաքրքրում էր, թե ինչ ուժեր կարող են հաղթել առաջարկվող ընտրություններում և, ըստ այդմ՝ թելադրող դառնալ համագաղութային մարմնում: Ու քանի

<sup>1</sup> «Դրօշակ», 1931, թիվ 10, էջ 231-232:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 232-234:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 234:

<sup>6</sup> «Գաղութային խնդիրներ», «Դրօշակ», 1929, թիվ 6-7, էջ 110:

<sup>7</sup> Տե՛ս Աղբալյան Ն., Ընտրանի, կապվեց և ծանոթագրեց Գ. Անանյանը, Ե., Երևանի համալսարանի հրատ., 2005, էջ 313:

<sup>8</sup> Տե՛ս «Ի՞նչ պատահած է արդեօք (ռամկավարները համագաղութային համագումարի պաշտպան)», «Յուսաբեր», 11 յուլիս, 1925:

<sup>9</sup> Տե՛ս Նալասարդեան Վ., Դաշնակցութեան քաղաքական ուղին, Կահիրե, 1925, էջ 96:

<sup>10</sup> Տե՛ս «Ի՞նչ պատահած է արդեօք (ռամկավարները համագաղութային համագումարի պաշտպան)», «Յուսաբեր», 11 յուլիս, 1925, էջ 2:

<sup>11</sup> Տե՛ս «Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962)», Ա. հասող, Պէյրութ, 1962, էջ 517:

որ եզրակացությունը հոգուտ ՌԱԿ-ի չէր, ժողովն առաջարկում էր հրաժարվել համագաղութային համագումարի գաղափարից<sup>1</sup>: Սակայն փոխադարձ առաջարկ է կատարվում, որ Պողոս Նուբարի Ազգային պատվիրակությունը գումարի գաղութների մի ընդհանուր ժողով՝ լսելու պատվիրակության հաշվետվությունը և մշակելու հետագա գործունեության համար նոր ուղենիշներ<sup>2</sup>: Թեև, ըստ ելույթի, ՌԱԿ-ի առաջարկն ուղղակիորեն չէր առնչվում համագաղութային համագումարի միջոցով համապատասխան մարմին ձևավորելու առաջարկին, ակնհայտ է, որ սեփական առաջարկով այլ օրակարգով գումարվելիք ժողովում փորձ էր կատարվելու հստակեցնել ՅՅԴ-ից անկախ համագաղութային մարմին ձևավորելու հնարավորությունը: Սակայն նախատեսվող ժողովը տեղի չունեցավ, թեև հարցը հետագայում կրկին բարձրացվեց<sup>3</sup>:

1923 թ. խորհրդակցական ժողովի որոշումն ընդհանուր առմամբ կրկնվեց նաև 1924 թ. հունվար-փետրվարին գումարված ՌԱԿ-ի երկրորդ ընդհանուր պատգամավորական ժողովում, որը, հաշվի առնելով ՅՅԴ-ի քաղաքականությունը խորհրդային Չայաստանի նկատմամբ, որոշեց հրաժարվել որևէ համագործակցությունից այդ կուսակցության հետ<sup>4</sup>: Նույն թվականի ապրիլին ՌԱԿ-ի հովանու ներքո հրատարակվող Փարիզի «Ապագայ» շաբաթաթերթը, քննարկելով համագաղութային համագումարի հարցը, գրում էր, որ ՌԱԿ-ի երկրորդ ընդհանուր պատգամավորական ժողովն ընդունել է նման համագումար կազմակերպելու անհրաժեշտությունը, սակայն խնդրահարույց էին համագումարի նախաձեռնության (ավելի որոշակի՝ նախաձեռնողի-Ա.Ե.), կազմակերպման ձևի, հեղինակության և արդյունքի հարցերը: Ուստի անհրաժեշտ էր դիտվում, որ համագումարի անցկացումը նախաձեռնի խորհրդային Չայաստանի կառավարությունը, իսկ օրակարգում հիմնականը լինի հայրենիքի և գաղթավայրերի հարաբերությունների հարցը: Համագումարի անցկացման համար, եթե հնարավոր չլինի որևէ հայաշատ երկրում այն անցկացնելը, առաջարկվում էր ընտրել Իտալիայի քաղաքներից մեկը<sup>5</sup>: Ի պատասխան, ՅՅԴ-ի «Հայրենիք» օրաթերթն իր խմբագրականում գտնում էր, որ ՌԱԿ-ը զղջացել է ընդհանուր պատգամավորական ժողովում ՅՅԴ-ի առաջարկը մերժելու համար և նշված հոդվածով յուրօրինակ նահանջի փորձ արել: Սակայն քննադատվում էր «Ապագայի» հողվածագրի այն մոտեցումը, թե համագումարն առանց խորհրդային Չայաստանի կառավարության նախաձեռնության հեղինակություն չի ունենա, քանզի «...քնական է, որ, եթե կանոնադրական ծայնատուութեամբ համագումար մը հրաւիրուի, ան ոյժ եւ հեղինակութիւն պիտի ունենայ ժողովրդի աչքին»: Նշվում էր նաև, որ ՌԱԿ-ը միշտ էլ դեմ է եղել ժողովրդի քվեարկությանը և ընտրովի մարմիններին, քանի որ այնտեղ գիտեն, որ ժողովրդի ընտրությունն իրենց օգտին չէ: Ռամկավարները լավագոյնս գիտակցում են, որ «ռամկավարական սկզբունքի հիման վրայ» համագաղութային համագումար հրավիրելու դեպքում ՅՅԴ-ն այնտեղ ներկայացված է լինելու ժողովրդի ձայների ճնշող մեծամասնությամբ, դրա համար էլ ՌԱԿ-ի ղեկավարությունը «օգնության է կանչում» խորհրդային Չայաստանի ղեկավարությանը<sup>6</sup>:

1925 թ. հունիսին ՌԱԿ-ի Աթենքի օրգան «Արարատը» դարձյալ քննարկում էր խորհրդային Չայաստանի կառավարության կողմից համագաղութային «վերին մարմին մը» ստեղծ

<sup>1</sup> Տէս Դալլաթյան Կ., նշվ. աշխ., էջ 62:

<sup>2</sup> Տէս նույն տեղում:

<sup>3</sup> Տէս նույն տեղում, էջ 74-75:

<sup>4</sup> Տէս նույն տեղում, էջ 83-84:

<sup>5</sup> Տէս Դարբինեան Ար., Չայաստանի նախաձեռնութեամբ, «Ապագայ», 5 ապրիլ, 1924:

<sup>6</sup> Տէս «Ստրկամտութեան նոր ապացոյց մը», «Հայրենիք», 27 ապրիլ, 1924:

ծելու հարցը, քանի որ այդ հանգրվանում «բոլոր հայերն հպատակ ընդունելու» հնարավորություն այն չունեի<sup>1</sup>: Այդ հողվածին ի պատասխան «Յուսաբերը» գրում է, որ ՌԱԿ-ը, փաստորեն, դեռևս անհասկանալի պատճառով ցանկանում է փրկել համագաղութային համագումարի գաղափարը, որը նախկինում համարում էր «թաղված»<sup>2</sup>:

Համագաղութային մարմնի խնդիրը քննարկվեց նաև ՌԱԿ-ի 1929 թ. չորրորդ ընդհանուր պատգամավորական ժողովում, որտեղ բանաձևվեց հետևյալը. «Պատգամ. ժողովը համագաղութային մարմնի մը կազմութիւնը կը գտնէ անգործնական եւ անկարելի»<sup>3</sup>:

Համագաղութային համագումար հրավիրելու գաղափարը 1924 թ. մերժվեց նաև Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից: ՀԲԸՄ-ում համարում էին, որ առանց հայկական իրականության մեջ կենտրոնական դեր զբաղեցնող հայկական պետության՝ Խորհրդային Հայաստանի, անիմաստ է անցկացնել ողջ հայության շահերին միտված համագումար, ուստի նման համագումարը, եթե պիտի նախաձեռնվի, ապա միայն համագաղութային և ոչ թե համագաղութային ձևաչափով<sup>4</sup>:

Արտերկրի հայկական ազդեցիկ կազմակերպությունների կողմից համագաղութային համագումար հրավիրելու ՀՅԴ-ի առաջարկը մերժելու հիմնական պատճառներից մեկն էլ այն էր, որ այն դիտարկվում էր որպես սփյուռքում այդ կուսակցության մենատիրության հաստատման ցանկության արդյունք<sup>5</sup>: ՀՅԴ-ի մենատիրության հաստատման վախի հետևանքով ՌԱԿ-ի կողմից համագաղութային մարմնի ստեղծումից հրաժարվելը նկատել է նաև Կ. Դալլաթյանը<sup>6</sup>: Հասկանալով դա՝ ՀՅԴ-ի գործիչները հայտնում էին, որ «Գաղութահայութեան ազգային կազմակերպութիւնը և ազգային հոսանքների համերաշխութիւնը ներկայ պայմաններում մենք համարում ենք այնպիսի օգտակար գործ, որ պատրաստ ենք «մենատիրութիւնից» էլ հրաժարել»<sup>7</sup>: Այս առումով հղումը կատարվում էր կուսակցության 11-րդ ընդհանուր ժողովի որոշմանը, ըստ որի՝ անհրաժեշտ էր, որ դաշնակցականները մասնակցեին և աջակցեին հայապահպանությանը միտված մշակութային ձեռնարկներին՝ միևնույն ժամանակ չձգտելով անձամբ դեկավարել գործընթացները, այլ փորձելով գաղութահայության մեջ արթնացնել ազգային գիտակցություն և ապահովել նրանց մասնակցությունը համայնքային գործերին<sup>8</sup>:

1929 թ. գաղթաշխարհի վիճակի մասին հույժ հետաքրքրական է «Դրօշակի» 1930 թ. 1-ին համարի խմբագրականում տեղ գտած հետևյալ տողերը, որոնցում երևում է նաև համագաղութային մարմնի ձևավորման ջանքերի տապալման հիասթափությունը. «Գաղութների համար ... 1929 թևականը շօշափելի բարիք չբերեց. շարունակեց ցուած աշխատանքը ազգային ուժերի հաւաքման ու կազմակերպման եւ ազգային մշակոյթի զարգացման: Ամեն հատուած, ամեն գաղութ, ամեն յարանւանութիւն, ամեն կուսակցութիւն շարունակեց քայլել առանձին-առանձին, յաճախ, ներհակ ուղիներով, անհաշտ պայթարելով իրար դէմ: ...Գաղութների ինքնապաշտպանութեան ամենազու միջոցը՝ համագաղութային կազմակերպութեան պահանջը մնում է չգոհացած եւ հերթական խնդիր եւ, որպէս այսպիսին, անցնում է ժառանգութիւն 1930 թևականին»<sup>9</sup>:

1930-ական թթ. սկզբներին համագաղութային մարմին ձևավորելու համար շրջաճանաչվում էր հետևյալ գաղափարը. «Խորհրդային իշխանութեան կիրարկած հակագաղութահայ քաղաքականութեան հետեւանքով արտասահմանի հայ զանաւածները վերածուում

<sup>1</sup> Տե՛ս «Արարատ», 27 յուլիս, 1925:

<sup>2</sup> Տե՛ս «Ի՞նչ պատահած է արդեօք (ռամկավարները համագաղութային համագումարի պաշտպան)», «Յուսաբեր», 11 յուլիս, 1925:

<sup>3</sup> Դալլաթյան Կ., նշվ. աշխ., էջ 162:

<sup>4</sup> Տե՛ս Կարկիւտան Ե., Համագաղութային ոչ թե համագաղութային, «Արեւ», 4 յուլիս, 1924, № 177:

<sup>5</sup> Տե՛ս «Գաղութային խնդիրներ», «Դրօշակ», 1929, թիւ 6-7, էջ 110:

<sup>6</sup> Տե՛ս Դալլաթյան Կ., նշվ. աշխ., էջ 234:

<sup>7</sup> «Գաղութային խնդիրներ», «Դրօշակ», 1929, թիւ 6-7, էջ 110:

<sup>8</sup> Տե՛ս «Յայտագիր Հ. Յ. Դ. ԺԱ. ընդհանուր ժողովի», «Դրօշակ», 1929, թիւ 4-5, էջ 67:

<sup>9</sup> «1929-1930», «Դրօշակ», 1930, թիւ 1, էջ 3-4:

են ինքնամփոփ հաւաքականութեան, եւ որպէսզի այդ հաւաքականութիւնը ապրի ու յարատեւէ, կատարելագործւի ու յառաջադիմէ, անհրաժեշտ է, որ ներքնապէս կազմակերպւի եւ դիմադրական զէնքերով զինւի արտաքին վտանգների դէմ: Այսինքն՝ անհրաժեշտ է, որ գաղութահայութիւնը կազմակերպւի գաղութօրէն ու համագաղութօրէն: Անհրաժեշտ է ամրացնել գոյութիւն ունեցող ազգային ինքնավար մարմինները, չեղած տեղը՝ նորերը ստեղծել եւ բոլորը միացնել համագաղութին ընդհանուր կազմակերպութեան մարմնի մէջ: Անհրաժեշտ է, որ ազգային բոլոր հոսանքները, բոլոր չեզոք տարրերը գործակցեն այս կենսական հարցի շուրջ»<sup>1</sup>: Հետաքրքրական է, որ ներկայացնելու համար գաղութային կազմակերպութեան անհրաժեշտութիւնը մի կողմից, իսկ մյուս կողմից գաղթաշխարհի մյուս ուժերին համագործակցութեան բերելու նպատակով «Դրօշակի» հոդվածագիրը հիմնավորում էր, որ այդ կազմակերպութիւնը պետք է լինի ոչ քաղաքական, քանի որ կազմակերպված ու ոչ քաղաքական լինելու պարագայում այն կդառնա բռնադատների համար անմատչելի: Ուստի վերջիններս կատարի ձևով դեմ են գաղութային կազմակերպութեանը<sup>2</sup>: «Դրօշակը» շեշտադրում էր, որ գաղթավայրերի կազմակերպումը կուսակցութեան մարմինների և մամուլի հիմնական նպատակը պետք է լինի: Իսկ գաղթավայրերի կազմակերպման գերիխնդիրը արտասահմանի հայութեան պահպանումն է՝ գալիք Հայաստանի կերտման համար<sup>3</sup>:

Կարևոր է, որ այս շրջանում գաղափարի նկատմամբ դարձյալ սկսում է որոշակի հետաքրքրություն դրսևորել ՌԱԿ-ը: Թերևս պատճառն այն էր, որ ճիշտ նույն ժամանակ տեղի էր ունենում ՌԱԿ-ի և Հայաստանի օգնութեան կոմիտեի համագործակցութեան խզումը<sup>4</sup>: Այս տեսակետից կարևոր է, որ 1931 թ. տեղի ունեցած՝ ՌԱԿ-ի հինգերորդ ընդհանուր պատգամավորական ժողովը, քննելով համագաղութային մարմին ստեղծելու ՀՅԴ-ի բյուրոյի առաջարկ-նամակը, որոշեց հանձնարարել նորընտիր կենտրոնական վարչութեանը՝ բանակցելու ՀՅԴ-ի ղեկավարութեան հետ: Սակայն բանակցութիւնների հիմքում սկզբում պետք է լինէր ՀՅԴ-ի կողմից Խորհրդային Հայաստանի ճանաչման, Հայաստանի վերաշինութեան և ներգաղթի հարցերին դրական վերաբերմունք որդեգրելու պահանջը, որի իրականացումից հետո երկու կուսակցութիւնները կարող էին համագործակցել համայնքներում ազգապահպանման հարցերում: Մասնավորապէս, հնարավոր կլինէր քննարկել ՀՅԴ-ի առաջարկած համագաղութային մարմնի ստեղծման հնարավորութիւնը և, այն էլ, եթէ ստացվեր ՌԱԿ-ի շրջանային վարչութիւնների 2/3-ի համաձայնութիւնը<sup>5</sup>:

1931 թ. սկսվեցին բանակցութիւնները ՌԱԿ-ի կենտրոնական վարչութեան և ՀՅԴ-ի բյուրոյի միջև: Սեպտեմբերին Փարիզում տեղի ունեցած հանդիպմանը ՌԱԿ-ի ներկայացուցիչները ներկայացրին իրենց նախապայմանները, որոնցից առավել դժվարինը ՀՅԴ-ի կողմից Խորհրդային Հայաստանը ճանաչելու պահանջն էր: ՌԱԿ-ը պատվիրակութիւնը կենտրոնական վարչութիւնից հրահանգ ունէր՝ նույնիսկ անհաջող բանակցութիւնների պարագայում չզժտվել ՀՅԴ-ի ներկայացուցիչների հետ, այլ փորձել առնվազն համայնքային հարցերում համերաշխ գործակցութեան հնարավորութիւնը ստեղծել: Սակայն համաձայնութեան հասնելի վերջո չստացվեց: 1932 թ. հունվարին բանակցութիւնները կանգ առան և վերջանականապէս տապալվեցին հուլիսին<sup>6</sup>:

Փաստորէն, արտերկրի հայութեան համար հույժ կարևոր՝ համագաղութային համագումարի հրավիրման նախաձեռնութիւնը 1920-ական թթ. և 1930-ական թթ. սկզբին անհաջողութեան մատնվեց՝ հիմնականում հայկական կազմակերպութիւնների միջև առկա

<sup>1</sup> «Գաղութահայ կազմակերպութեան խնդիրը», «Դրօշակ», 1931, թիւ 4, էջ 66:

<sup>2</sup> Տէ՛ս «Գաղութահայ կազմակերպութեան խնդիրը», «Դրօշակ», 1931, թիւ 4, էջ 66-67:

<sup>3</sup> Տէ՛ս նույն տեղում, էջ 67:

<sup>4</sup> Տէ՛ս Դարբինեան Ա., Հայ ապաստարական շարժման օրերէն (յուշեր 1890էն 1940), Ե., 2003, էջ 351: Տէ՛ս նաև Մակարյան Լ., Հայաստանի օգնութեան կոմիտեի փոխհարաբերութիւնը սփյուռքահայ կուսակցութիւնների հետ, «Բանբեր Հայաստանի արխիւներին», 2010, թիւ 1, էջ 196-197:

<sup>5</sup> Տէ՛ս Դալլաքյան Կ., նշվ. աշխ., էջ 200-201:

<sup>6</sup> Տէ՛ս նույն տեղում, էջ 231-232:



հակասությունների, խորհրդային Հայաստանի կառավարության բռնած դիրքի և այդ համագումարի միջոցով սփյուռքում ՀՅԴ-ի մենատիրության հաստատման «վտանգի» պատճառով:

### ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԳԱՂԱՓԱՐԸ

Խորհրդային Հայաստանի կառավարությունը ի սկզբանե դեմ էր համագաղութային համագումարի և համապատասխան մարմնի ստեղծման գաղափարին, քանի որ այն դիտարկում էր որպես նպատակային գործողություն ընդդեմ խորհրդային կարգերի: Փարիզում հրատարակվող կոմունիստական «Արշալ» թերթը այդ առիթով գրում էր. «Այո՛, «արեւմտահայ համագումարի (իմա՛ համագաղութային համագումարի - Ա.Ե.)» նպատակը հայ պուրժուազիայի միացեալ ճակատ ստեղծելու ծրագիր է. գաղութային «անհայրենիք պետութիւն» ստեղծելու ծրագիր»<sup>1</sup>: Ուստի տեղական կոմունիստները և նրանց համակիրները ամեն կերպ պայքարում էին նման համագումարի գաղափարի դեմ: Պատահական չէ, որ նույն թերթը այնուհետև գրում էր, որ գաղթավայրերում պառակտված վիճակը կոմունիստների «պարծանքն» է, իսկ ազգայնականների տիրապետությունն այնտեղ արդեն գործնականում ավարտված է: Շեշտվում էր, որ այդ նպատակների համար կոմունիստները «համառ և հետևողական» պայքար են մղել<sup>2</sup>:

Ի սկզբանե հասկանալով, որ համագաղութային մարմնի ստեղծման գաղափարը հանգեցնելու է խորհրդային Հայաստանի ղեկավարության հակազդեցությանը, ՀՅԴ-ում փորձում էին հիմնավորել, որ այն քաղաքական խնդիր չէ. «Գաղութների կազմակերպութիւնը Երեւանի հետ կապած քաղաքական հարց չէ, այլ ազգային-մշակութային անհրաժեշտութիւն: Բնականաբար, գաղութահայութեան կենսունակութիւնը, վերջին հաշուով, ե՛լ քաղաքական ազդակ է, իբրև մի միջոց, որ կուժեղացնէ հայ ժողովրդի ընդհանուր կարողութիւնը, բայց արտասահմանի հայ ժողովրդի կազմակերպութեան անմիջական գրգռիչը քաղաքական չէ: Հարկաւոր է միացնել ու կազմակերպել գաղութները, որպէսզի աւելի մեծ թափով ու յաջողութեամբ կարելի լինի պայքարել այլասերման վտանգի դեմ, որպէսզի նոր սերունդը չօտարանայ, որպէսզի ազգային ամբողջականութիւնը գաղութներում չխախտւի, որպէսզի տարագիր բազմութիւնները մնան տոգորած հայրենիքի գաղափարով, մտքով ու հոգով կապւած լինեն Հայաստանի ու Երկրի ժողովրդի հետ, որպէսզի թեմական մարմիններ, հայոց մշակոյթ, դպրոց, գրականութիւն, արւեստ, հայրենակցականներ եւ ուրիշ միութիւններ աղմկայոյզ կռիւների թատերաբեմ չդառնան ու զոհ չգնան կուսակցական կրքի եւ ատելութեան»<sup>3</sup>: Չնայած ասվածին, գիտական գրականության մեջ ևս շրջանառվում է այն տեսակետը, որ նման համագումարի նախաձեռնությունը նախատեսում էր այն դարձնել «խորհրդային Հայաստանին հակակշիռ գաղութահայ քաղաքական ուրույն միավոր»<sup>4</sup>:

Ինչպես դիպուկ նկատել է Կ. Դալլաթյանը՝ գաղութահայ քաղաքական ուժերի համերաշխությունը, առավել ևս համագաղութային մարմնի ստեղծումը, փաստորեն, միայն այդ ուժերից չէ, որ կախված էր: Դրան կտրուկ դեմ էր և խոչընդոտում էր խորհրդային Հայաստանը՝ այդ գործը հանձնարարելով Հայաստանի օգնության կոմիտեին: Ուսումնասիրողը մեջ է բերում ՀՕԿ-ի Ֆրանսիայի շրջանի երկրորդ համագումարի կոչը գաղութահայությանը՝ թույլ չտալ գաղութահայ ազգային գերագույն իշխանությունն ստեղծումը, համարելով, որ դրա նպատակը խորհրդային Հայաստանի դեմ ճակատ ստեղծելն էր<sup>5</sup>:

<sup>1</sup> «Արշալ», 1932, 10 դեկտեմբեր, թիվ 11:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, 1932, 17 դեկտեմբեր, թիվ 12:

<sup>3</sup> «Գաղութահայ կազմակերպութեան խնդիրը», «Դրօշակ», 1931, թիվ 4, էջ 66:

<sup>4</sup> Տե՛ս Ավագյան Բ., Հողապահպանության և «անհայրենիք» հայապահպանության գաղափարների դրսևորումը ԱՄՆ-ի հայ համայնքում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2014, № 2, էջ 52:

<sup>5</sup> Տե՛ս Դալլաթյան Կ., նշվ. աշխ., էջ 137-138:

Խորհրդային Չայաստանի կառավարության վերաբերմունքի պատճառն այն էր, որ ՅՅԴ-ն 1920-ական թթ. կանգնած էր սփյուռքում «Անհայրենիք պետություն» ստեղծելու գաղափարի ակունքներում: Հարկ է հիշել, որ ՅՅԴ-ն, որպես ազգային կուսակցություններից ամենախոշորը, Խորհրդային իշխանությունների կողմից ի սկզբանե հայտնվել էր մերժվածի կարգավիճակում, ուստի գործունեությունը գաղթավայրերում նրա համար դարձել էր հիմնականը: Դեռևս 1924 թ. Ն. Աղբայանը կարծում էր, որ «անհրաժեշտ է, որ արտասահմանի հայությունը, բոլոր գաղութները ստեղծեն բարձրագույն կազմակերպություն մը համապատասխան ճյուղավորումներով: Կազմվին գավառային, շրջանային մարմիններ, որոնք միավորված ըլլան կեդրոնական Խորհրդի մը հատուկ և համապատասխան սահմանադրությամբ: Տեսակ մը բարոյական պետություն, անհայրենիք պետություն, պետական ստորոգեչիներով, ազգային և միջազգային իրավական կարգերով: Այդ մարմինը գերագույն մարմինն է արտասահմանի հայության, իր շուրջը պիտի համախմբե բոլոր ցրված գաղութներու հայությունը, անոնց ազգային, մշակութային, տնտեսական գործունեությունները՝ պետության և քաղաքացիական փոխհարաբերություններով: Մյուս կողմե ամեն գաղութ իր ապրած շրջանակին մեջ պիտի մեկուսանա, չպիտի ըլլա քաղաքացի իր ապրած երկրին, այս անջատումով միանալու համար իր ազգային, ի ազգայնության համապատասխան կազմակերպության, որ պետք է ճանաչվի նաև Ազգերի դաշնակցության կողմե»<sup>1</sup>: Այս և նման ծրագրերով հանդես գալը ՅՅԴ-ի ներսում ծնել էր այն համոզմունքը, որ «Դաշնակցութիւնն ունի պետութեան գործառնութիւններ – զինուորական, ներքին, արտաքին, դատական, լուսաւորութեան, ելլամտական»<sup>2</sup>: Բացի վերոշարադրյալը, պետք է նշել, որ ՅՅԴ-ի ղեկավարները նաև լավ էին հասկանում, որ միայն ՅՅԴ-ի շուրջ գաղթաշխարհը միավորելը, ավելին, միայն կուսակցության հնարավորություններով համագաղութային մարմին ձևավորելը այնքան էլ իրական չէ, ավելին, իրականանալու պարագայում էլ չէր կարող համագաղութային լինել՝ այլ կուսակցությունների չմասնակցելու դեպքում: Ուստի, ինչպես տեսանք, երկար ժամանակ փորձեր էին կատարում սփյուռքահայ մյուս զանգվածային կազմակերպություններին ներգրավելու համագաղութային համագումարի հրավիրման աշխատանքներին, որոնք, ի վերջո, հաջողություն չունեցան:

## ԱՍՓՈՓՈՒՄ

1920-ական թթ. ՅՅԴ-ն ստիպված էր ամբողջությամբ կենտրոնանալ գաղթավայրերում գործունեության վրա: Այնտեղ տիրող իրավիճակը ստիպում էր, որ ՅՅԴ-ն հանդես գա դրանք կազմակերպելու և միավորելու աշխատանքներով, որի արդյունքում մշակվեց և սփյուռքում գործող մյուս երկու կուսակցությունների՝ Սոցիալ-դեմոկրատ հնչակյան և Ռամկավար ազատական կուսակցությունների, ինչպես նաև Չայկական բարեգործական ընդհանուր միության քննարկմանը ներկայացվեց համագաղութային համագումարի և դրա արդյունքում՝ գաղութային միասնական ղեկավար մարմնի ձևավորման առաջարկը: Այն ՍԴՀԿ-ի և ՀԲԸՄ-ի կողմից ի սկզբանե մերժվեց, իսկ ՌԱԿ-ի հետ քննարկումներն ու բանակցությունները փակուղի մտան միջկուսակցական աշխարհայացքային հակասությունների և Խորհրդային Չայաստանի ջանքերի պատճառով, որը նման նախաձեռնության մեջ տեսնում էր իրեն հակադրվելու ցանկություն:

**Арман Егиазарян, ДЕЯТЕЛЬНОСТЬ АРФ ДАШНАКЦУТИОН В ДИАСПОРЕ В 1920-Е ГОДЫ И ПРОБЛЕМА СОЗЫВА ОБЩЕДИАСПОРНОГО КОНГРЕССА.** В 20-е годы Армянская революционная федерация Дашнакцутюн была вынуждена полностью сосредоточиться на проблемах диаспоры, главными из которых

<sup>1</sup> «Յուսարբեր», Կահիրե, 22 հունվար, 1924:

<sup>2</sup> Հանգոյց Ն., Ստաժումներ Հ. Յ. Դաշնակցութեան մասին, «Դրօշակ», 1930, թիվ 2, էջ 36:

были организация отдельных общин и сохранение армянской национальной идентичности. Но эта работа была не под силу одной партии. В итоге представителями АРФ Дашнакцутюн было подготовлено предложение о созыве общедиаспорного конгресса и избрании единого руководящего органа и вынесено на обсуждение Социал-демократической Гнчакской партии, Армянской либерально-демократической партии Рамкавар и Всеобщего армянского благотворительного союза. Первоначально это предложение было отклонено Гнчакской партией и Благотворительным союзом, а обсуждения и переговоры с партией Рамкавар зашли в тупик из-за усилий правительства Советской Армении, которое усмотрело в таком желании угрозу своим интересам.

**Ключевые слова:** общины, общее собрание, партия, съезд, коммунисты, диаспора, АРФ Дашнакцутюн, Советская Армения, беженцы, «Дрошак».

**Arman Yeghiazaryan, ACTIVITIES OF ARF DASHNAKTSUTYUN IN DIASPORA IN THE 1920S AND THE PROBLEM OF CONVENING A DIASPORA CONGRESS.** In the 1920s, the Armenian Revolutionary Federation Dashnaktsutyun was forced to fully focus on the problems of the diaspora, the main of which were the organization of separate communities and the preservation of the Armenian national identity. But this work was beyond the power of one party. As a result, the proposal to organize a diaspora congress and elect a single governing body was prepared by representatives of the ARF Dashnaktsutyun and submitted for discussion to the Social Democrat Hunchakian Party, the Armenian Liberal Democratic Party Ramkavar and the Armenian General Benevolent Union. Initially, this proposal was rejected by the Hunchakian Party and the Benevolent Union, and discussions and negotiations with the Ramkavar party were deadlocked due to the efforts of the government of Soviet Armenia, which saw such a desire as a threat to its interests.

**Key words:** communities, general conference, party, congress, communists, diaspora, ARF Dashnaktsutyun, Soviet Armenia, refugees, “Droshak”.